ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/15

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 07.02.2018թ. թիվ 03/26-3/2071-18 գրությամբ «Ասատրյանս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02618043) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 05.02.2018թ. թիվ 22/08.1.6-120 գրության հիման վրա, 07.02.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Ասատրյանս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը 05.02.2018թ. թիվ 22/08.1.6-120 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ մեր պաշտոնական հարցմանը Ձեր կողմից ս.թ. հունվարի 29-ին թիվ 03/24-2/1348-18 գրությամբ տրամադրված տեղեկատվության հիման վրա Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպան կարգի» 33-րդ կետի 8-րդ ենթակետի, ինչպես նաև Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 15.11.2017թ. ստորագրված ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծառայությունների մատուցման գնման պայմանագիր 7.3 կետի պահանջներով, ս.թ. հունվարի 31 թիվ 22/08.1.6-114 գրությամբ պաշտոնապես (էլեկտրոնային եղանակով և փստով) ծանուցել է նշված ընկերությանը 15.11.2017թ. ստորագրված ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Արմեն Թամազյանը, Արմեն Ֆերոյանը և Դավիթ Մելիքսեթյանը:

3. <u>«Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ասատրյանս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 19.02.2018թ. ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել էր հետևյալը.

«Ասատրյանս» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնված թիվ ՍՑ-ԷՍ-2018/15 պաշտոնական ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Ձեր վարույթում է քննվում «Ասատրյանս» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնված թիվ ՍՑ-ԷՍ-2018/15 պաշտոնական ընթացակարգը, որի համար հիմք է հանդիսացել՝ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան հիմնադրամի և «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի միջև 15.11.2017թ. կնքած ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծածկագրով աուդիտի ծառայությունների մատուցման գնման պայմանագրի միակողմանի լուծումը:

Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարան հիմնադրամի և «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 15.11.2017թ. կնքվել է ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծածկագրով աուդիտի ծառայությունների մատուցման գնման պայմանագիր:

Ծառայությունների մատուցման փուլում, այն է՝ 15.01.2018թ., Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարան հիմնադրամի ռեկտոր Ռ. Միրզախանյանի կողմից ստացվել է գրություն հետևյալ բովանդակության. «Հիմք ընդունելով Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի կողմից հայտարարված ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5 ծածկագրով գնանշման հարցման հրավերը և 15.11.2017թ. կնքած թիվ ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 աուդիտորական ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը՝ հիշեցնում ենք, որ տարեկան ֆինանսնական հաշվետվությունների աուդիտի իրականացման վերջնաժամկետ է նախատեսված մինչև 15.02.2018թ.: Համաձայն Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ ձեռքբերվող ծառայությունների տեխնիկական բնութագրի պայման է սահմանված, որ ֆինանսական հաշվետվությունների աուդիտը պետք է իրականացվի միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն՝ CIA, ACCA միջազգային որակավորում ունեցող առնվազն 4 աշխատակիցների միջոցով: Հաշվի առնելով վերը նշվածը՝ խնդրում ենք երկօրյա ժամկետում ներկայացնել Ձեր չորս մասնագետների տվյալները, աշխատանքային պայմանագրերի կրկնօրինակները և համապատասխան որակավորումները հիմնավորող փաստաթղթերը, որոնք իրականացնելու են ՀՊՄՀ

Հիմնադրամի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտը: Հաշվի առնելով ժամկետների սեղմ լինելը՝ Ձեր համապատասխան որակավորում ունեցող մասնագետներին հրավիրում ենք 17.01.2017թ. ժամը 11:00-ին ՀՊՄՀ-ի պրոռեկտոր Ա. Թամազյանի աշխատասենյակ, հետագա աշխատանքների պլանավորման և իրագործման հարցերի քննարկման նպատակով»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ն 17.01.2018թ. պատասխանել է, որ համաձայն «Ասատրյանս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) և Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ Պատվիրատու) միջև կնքված ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), Կատարողը իր աշխատանքները սկսել է 12.12.2017թ. և շարունակվում է մինչ օրս: «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուի համախմբված Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը կհանձնի ժամանակին, ինչպես նշված է Պայմանագրում՝ 15.02.2018թ.: Ի հավելումն, Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջների համապատասխանությունը ստուգելու համար Պատվիրատուն պարտավոր է անգործության ժամկետում Կատարողից պահանջել բոլոր որակավորման չափանիշներին համապատասխանության փաստաթղթերը: Ուստի Ձեր պահանջը համարում ենք ժամանակավրեպ: Մենք պարտավորվածություն չունենք լրացուցիչ Ձեզ ներկայացնելու նույն փաստաթղթերը.....»:

Ի լրումն 17.01.2018թ. գրության «Ասատրյանս» ՍՊԸ-ն 25.01.2018թ. ՀՊՄՀ հիմնադրամին է ներկայացրել նաև 2017թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական առաջադրանքի իրականացման թիմի կազմը՝ նշելով մասնագետների որակավորումները:

Այնուհետև, 26.01.2018թ. Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանը թիվ 3308 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, որին ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.01.2018թ. թիվ 03/24-2/1348-18 գրությամբ պատասխանել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա տեղեկատվության համաձայն՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ում աշխատում են թվով հինգ որակավորված հաշվապահներ ասոցիացիայի ACCA կողմից տրված որակավորման վկայականի կրող: ACCA վկայականի կրողն է հանդիսանում Արամայիս Կարապետյանը՝ աուդիտորի

որակավորման վկայական թիվ 494, տրված 01.03.2016թ., նույնականացման քարտ՝ 003077302:

Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան հիմնադրամը 31.01.2018թ. թիվ 22/08.1.6-114 գրությամբ ծանուցել է «Ասատրյանս» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան հիմնադրամի 2017թ. ֆինանսական տարվա տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով 2017թ. հոկտեմբերի 20-ին էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգում հրապարակված գնանշման հարցման հրավերի հավելված 5-ում ներկայացված ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի նախագծի հավելված 1-ով (տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) ձեռք բերվող ծառայությունների նկարագրով նախատեսված է եղել պահանջ՝ պատվիրատուի 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ) հրապարակման ենթակա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացում միջազգային CIA, ACCA միջազգային որակավորում ունեցող առնվազն 4 աշխատակիցների միջոցով: Ձեր ղեկավարած Ընկերությունը ներկայացրել է նշված գնանշման հարցմանը մասնակցության հայտ՝ վերջինիս կից ներկայացնելով նաև հրավերով պահանջվող հայտարարություն որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին /հավելված 3/: Սահմանված ընթացակարգի համաձայն՝ Ձեր ղեկավարած Ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար, և հիմք ընդունելով ներկայացված գնային առաջարկը, գնահատող հանձնաժողովի կողմից կայացվել է որոշում՝ աուդիտի ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Ասատրյանս» ՍՊԸ-ին, որն էլ Համալսարանի և Ընկերության միջև կնքվել է 15.11.2017թ.: ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526 Ն որոշմամբ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված....: Ելնելով վերոգրյալից, թե հայտերի գնահատման փուլում, և թե ընթացակարգով սահմանված անգործության ժամկետի ընթացքում «Ասատրյանս» ՍՊԸ-ից չի պահանջվել ներկայացնելու գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը:

Սակայն արդեն պայմանագրի գործողության ժամանակահատվածում Պատվիրատուի մոտ անհրաժեշտություն է ծագել հավաստիանալու գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման պահանջներին Ընկերության կողմից ներկայացված հայտարարության արժանահավատության գրությամբ դիմել ենք Ընկերությանը, սակայն Ընկերությունը 2018թ. հունվարի 17-ի պատասխան գրությամբ որակավորումները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մեր խնդրանքը մերժել է, այն համարելով ժամանակավրեպ, նշելով միաժամանակ, որ նշված փաստաթղթերի ներկայացման պահանջ Պատվիրատուն պարտավոր էր ներկայացնել Կատարողին անգործության ժամկետում, ինչը չի բխում գնումների ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներից: Չնայած այն հանգամանքին, որ հետագայում, 25.01.2018թ. Ընկերությունն էլեկտրոնային եղանակով կից գրությամբ ներկայացրել է աշխատակիցների որակավորման հավաստագրերի պատճենները, համալսարանը 26.01.2018թ. թիվ 3308 գրությամբ պաշտոնական հարցում է կատարել նաև ՀՀ ֆինանսների նախարարությանը և 29.01.2018թ. թիվ 03/24-2/1348-18 գրությամբ ստացել է պատասխան առ այն, որ ըստ նախարարությունում առկա տեղեկատվության, «Ասատրյանս» ՍՊԸ-ում աշխատում են թվով հինգ որակավորված աուդիտորներ, որոնցից միայն մեկն է հանդիսանում Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի ACCA կողմից տրված որակավորման վկայականի կրող:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526 Ն որոշմամբ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 8-րդ ենթակետի, ինչպես նաև Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարան հիմնադրամի և «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 2017թ. նոյեմբերի 15-ին ստորագրված ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծառայությունների մատուցման գնման պայմանագրի 7.3 կետի պահանջներով, պաշտոնապես ծանուցում ենք 2017թ. նոյեմբերի 15-ին ստորագրված ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին:

Վերոնշվածից պարզ է դառնում, որ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի համար ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծածկագրով աուդիտի ծառայությունների մատուցման համար կնքված պայմանագիրը լուծելու համար հիմք է հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարության 29.01.2018թ. թիվ 03/24-2/1348-18 գրությունը, համաձայն

որի՝ նախարարությունում առկա տեղեկատվության «Ասատրյանս» ՍՊԸ-ում աշխատում են թվով հինգ որակավորված աուդիտորներ, որոնցից միայն մեկն է հանդիսանում Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի ACCA կողմից տրված որակավորման վկայականի կրող:

Վերոնշված փաստերի կապակցությամբ հայտնվում է հետևյալը.

1. «Ասատրյանս» ՍՊԸ-ն 25.01.2018թ. ՀՊՄՀ հիմնադրամին է ներկայացրել 2017թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական առաջադրանքի իրականացման թիմի կազմը՝ նշելով մասնագետների որակավորման հավաստագրերը:

Պատվիրատուն չի հերքում տվյալ փաստը, որի մասին անդրադարձել է 31.01.2018թ. թիվ 22/08.1.6-114 գրությամբ՝ նշելով, որ 25.01.2018թ. Ընկերությունն էլեկտրոնային եղանակով կից գրությամբ ներկայացրել է աշխատակիցների որակավորման հավաստագրերի պատճենները, որով հավաստել է, որ աշխատակիցները հանդիսանում են Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի ACCA կողմից տրված որակավորման վկայականի կրող:

Փաստորեն, «Ասատրյանս» ՍՊԸ-ն դրանով իսկ կատարել է պատվիրատուի պահանջը և 25.01.2018թ. Պատվիրատուին է ներկայացրել պահանջված փաստաթղթերը:

2. Պատվիրատուն, հաշվի չառնելով և չուսումնասիրելով 25.01.2018թ. Ընկերության կողմից ներկայացված աշխատակիցների որակավորման հավաստագրերի պատճենները, որով հավաստել է, որ աշխատակիցները ունեն Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի ACCA միջազգային որակավորում, այնուամենայնիվ լուծել է «Ասատրյանս» ՍՊԸ-ի հետ կքնված պայմանագիրը այն հիմքով, որ Ընկերության միայն մեկ աշխատակից ունի Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի ACCA որակավորում: Ընդ որում, նշվածի հիմքում դրվել է ՀՀ ֆինանսների նախարարության ՀՊՄՀ հիմնադրամին ուղղված 29.01.2018թ. թիվ 03/24-2/1348-18 գրությունը, որով վերջինս հայտնել է, որ նախարարությունում առկա տեղեկատվության համաձայն, «Ասատրյանս» ՍՊԸ-ում աշխատում են թվով հինգ որակավորված աուդիտորներ, որոնցից միայն մեկն է հանդիսանում Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի ACCA կողմից տրված որակավորման վկայականի կրող:

Վերոգրյալի հետ կապված հայտնում ենք, որ նախ, ՀՀ ֆինանսների նախարարությունը չէր կարող Պատվիրատուին տրամադրել ACCA միջազգային որակավորման առկայության վերաբերյալ տեղեկատվություն, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարությունը չի հանդիսանում այն իրավասու մարմինը, որը կարող էր տրամադրել Երդվյալ որակավորված հաշվապահների միջազգային ասոցիացիայի ACCA կողմից որակավորված մասնագետների մասին ամբողջական տեղեկատվություն:

«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ «Աուդիտորների որակավորումը սույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված պահանջներին բավարարող աուդիտորի որակավորում ստանալու համար լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարություն) կամ մասնագիտացված կառույցին դիմած ֆիզիկական անձի (այսուհետ՝ դիմող) մասնագիտական գիտելիքների ստուգման արդյունքների հիման վրա աուդիտորի որակավորման վկայական (այսուհետ՝ վկայական) տալու ընթացակարգ է: Աուդիտորների որակավորումն իրականացվում է քննությունների միջոցով:

Վկայականը տալիս է լիազորված մարմինը և (կամ) մասնագիտացված կառույցը՝ դիմողի կողմից ծրագրի բոլոր բաժինների գծով քննությունները հանձնելու և վկայական ստանալու համար անհրաժեշտ միավորներ վաստակելու դեպքում:

Դիմողի կողմից որոշակի պաշտոններում կամ որոշակի աշխատանքներում աշխատանքներ կատարելու մասին աշխատանքային ստաժը տվյալ անձի աուդիտորի որակավորում ունենալու փաստը հաստատող փաստաթուղթ չի համարվում:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է ճանաչվել օտարերկրյա պետությունների համապատասխան կառույցների կողմից, ինչպես նաև Հաշվապահների միջազգային դաշնության (այսուհետ՝ ՀՄԴ) հավաստագիր ունեցող՝ Հայաստանի Հանրապետությունում գործող հասարակական կազմակերպությունների կողմից ՀՄԴ կրթական ստանդարտներին համապատասխան կազմված ծրագրերով անցկացված քննությունների արդյունքում որակավորված աուդիտորների որակավորումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է իրավասություն վերապահվել լիազորված մարմնին՝ սահմանելու միջազգային ճանաչում

ունեցող այն կառույցների ցանկը, ում կողմից անցկացված քննությունների արդյունքում որակավորված աուդիտորների որակավորումը ճանաչվում է»:

Նշված հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ ՀՀ-ում աուդիտորի որակավորումը տրամադրվում է լիազոր մարմնի կողմից՝ համապատասխան քննությունը հաջողությամբ հանձնելու և վկայական տրամադրելու միջոցով: Միևնույն ժամանակ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը հնարավորություն է ընձեռնում աուդիտորի միջազգային որակավորում ունեցող անձանց միջազգային որակավորման առկայության հիմքով ձեռք բերել նաև աուդիտորի ՀՀ որակավորման վկայական: Եվ տվյալ գործընթացի ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարությունը կարող է ձեռք բերել տեղեկատվություն աուդիտորի ՀՀ որակավորման վկայականի համար դիմաց անձանց մոտ աուդիտորի միջազգային որակավորման (այդ թվում նաև ACCA) առկայության մասին:

Մինչդեռ, Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիան ACCA հանդիսանում է միջազգային կազմակերպություն, որը որակավորման քննություն հանձնած մասնակիցներին տրամադրում է ACCA աուդիտորի միջազգային որակավորում՝ համապատասխան դասերով (Fundamentals level: F1-F9, Professional Level: P1-P7): Իր հերթին բոլոր դասերի քննություն հանձնած անձինք ձեռք են բերում Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիան ACCA լիիրավ անդամի կարգավիճակ (ընկերության կողմից ներկայացրած երկու աշխատակիցը հանդիսանում են այդ ասոցիացիայի լիիրավ անդամ):

Գտնում ենք, որ հենց այդ պատճառով, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը չի հանդիսանում այն իրավասու մարմինը, որը կարող էր տրամադրել Երդվյալ որակավորված հաշվապահների միջազգային ասոցիացիայի ACCA կողմից որակավորված մասնագետների մասին ամբողջական տեղեկատվություն, ուստի իր 29.01.2018թ. թիվ 03/24-2/1348-18 գրության մեջ ՀՀ ֆինանսների նախարարությունը շեշտել է՝ նախարարությունում առկա տեղեկատվության համաձայն, սակայն Պատվիրատուի կողմից հիմք է ընդունվել նախարարության վկայակոչված գրությունը և որպես հետևանք որոշում է կայացվել լուծել պայմանագիրը:

Գտնում ենք, որ նման պայմաններում ՀՀ ԿԳՆ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան հիմնադրամը, միակողմանի լուծելով «Ասատրյանս» ՍՊԸ-ի հետ 15.11.2017թ. կնքված ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծածկագրով աուդիտի ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը, գործել է ոչ իրավաչափ:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարան հիմնադրամի և «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 15.11.2017 կնքված ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծածկագրով աուդիտի ծառայությունների մատուցման գնման պայմանագրով «Ասատրյանս» ՍՊԸ-ին վերապահված պայմանագրային պարտավորությունների, ինչպես նաև պայմանագիրը միակողմանի լուծման վերաբերյալ Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարան հիմնադրամի 31.01.2018թ. թիվ 22/08.1.6-114 գրության ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ընկերությունը չի խախտել ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծածկագրով պայմանագրով նախատեսված որևէ պարտավորություն: Ինչպես բազմիցս նշվել է, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանը պայմանագիրը լուծել է, քանզի «Ասատրյանս» ՍՊԸ-ն իբրև թե չունի ACCA միջազգային որակավորում ունեցող առնվազն 4 աշխատակից:

Նման դեպքում գտնում ենք, որ բացակայում է «Ասատրյանս» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքը, քանզի վերջինս չի խախտել նշված պայմանագրով նախատեսված պարտավորություն:

4. Միևնույն ժամանակ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի կողմից ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5 ծածկագրով մրցույթի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով նախատեսվել է «Աշխատանքային ռեսուրս» որակավորման չափանիշ՝ ACCA միջազգային որակավորում ունեցող առնվազն 4 աշխատակցի պարտադիր առկայություն: Իսկ, ինչպես այս կապակցությամբ նշել է ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը իր 29.01.2016թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/04 որոշմամբ. «Խորհուրդը հարկ է համարում նշել, որ պայմանագրի հավելված 1-ում՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում պատվիրատուն պետք է նկարագրի ձեռք բերվող ծառայության նկարագիրը, այլ ոչ թե «Աշխատանքային ռեսուրս» որակավորման չափանիշին վերաբերող տվյալներ»:

Բացի այդ, ըստ էության, «Աշխատանքային ռեսուրս» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը պատվիրատուի կողմից պահանջվել է և գնահատվել է մրցույթի արդյունքում կնքված պայմանագրի կատարման փուլում, մինչդեռ ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մաս¬նակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը...: Նույն Կարգի 46-րդ, 48-րդ կետերը արդեն կարգավորում են գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատման հետ կապված հարաբերությունները: Սակայն պատվիրատուի կողմից Կարգի վկայակոչված կետերով նախատեսված գործողությունները իրականացվել են ոչ թե մրցույթի ընթացքում՝ մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերը գնահատելու փուլում, այլ կնքված և կատարվող պայմանագրի պայմաններում:

Ի պատասխան Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 02.03.2018թ. գրությանը, «Ասատրյանս» ՍՊԸ-ն 30.03.2018թ. Խորհրդին հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԿԳՆ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի կողմից 02.03.2018թ. ներկայացված առարկության քննարկման առարկան են դարձել հետևյալ փաստերը.

ա. ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծածկագրով պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման գնման պայմանագրի ժամկետները, այն է՝ ըստ Պատվիրատուի՝ Կատարողն իրականում փորձ է արել սկսել աուդիտի իրականացման աշխատանքները ոչ թե 12.12.2017թ., այլ թերևս 15.01.2018թ., այսինքն պայմանագրով ծառայությունների մատուցման համար նախատեսված եռամսյա ժամկետից երկու ամիս անց:

Վերոնշված հանգամանքի վերաբերյալ հայտնում ենք, որ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան հիմնադրամի և «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 15.11.2017թ. ստորագրված ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծառայությունների մատուցման գնման պայմանագրի Պատվիրատուի կողմից միակողմանի լուծելու հիմք է հանդիսացել՝ ՀՀ ֆինանսների նախարարության 29.01.2018թ. թիվ 03/24-2/1348-18 գրությունը, համաձայն որի՝ նախարարությունում առկա տեղեկատվության «Ասատրյանս» ՍՊԸ-ում աշխատում են թվով հինգ որակավորված աուդիտորներ, որոնցից միայն մեկն է հանդիսանում Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի ACCA կողմից տրված որակավորման վկայականի կրող:

Վերոնշված գրությունն էլ հիմք է հանդիսացել՝ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան հիմնադրամի և «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 15.11.2017թ. կնքած ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծածկագրով աուդիտի ծառայությունների մատուցման գնման պայմանագրի միակողմանի լուծմանը, որի հետևանքնով էլ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնվել է «Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԷՍ-2018/15 պաշտոնական ընթացակարգը:

Ուստի գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից 02.03.2018թ. ներկայացրած առարկության «ա» կետով բերված փաստարկները անհիմն են և տվյալ պաշտոնական ընթացակարգի շրջանակներում չի կարող քննարկվել ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծածկագրով պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետների ենթադրյալ խախտման փաստը:

բ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրում ենք հաշվի առնել այն փաստը, որ Պատվիրատուն ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծածկագրով մրցույթի հրավերը կազմել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտումներով, մասնավորապես տեխնիկական բնութագիր «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում» ներառել է «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին վերաբերող տվյալներ, մինչդեռ մցույթի հրավերի հավելված 1-ով՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում» Պատվիրատուն պետք է նկարագրեր ձեռք բերվող ծառայությունների նկարագիրը, այլ ոչ թե մասնակցին ներկայացվող «Աշխատանքային ռեսուրսներ» կամ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշներին վերաբերող տվյալներ:

Վերոհիշյալ դիրքորոշումը արտահայտել է նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ իր 29.01.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/04 որոշմամբ:

Նույնիսկ, եթե Պատվիրատուն առաջնորդվեր վերոնշված գրության «բ» կետով՝ ստացվում է, որ Պատվիրատուն պետք է «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը շտկելու և համապատասխան փաստաթղթեր տալու հնարավորություն ընձեռներ դեռևս հայտերի գնահատման փուլում:

Հենց դրանով է պայմանավորված եղել, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն իր 17.01.2018թ. գրությամբ հայտնել է, որ Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջների համապատասխանությունը ստուգելու համար Պատվիրատուն պարտավոր էր անգործության ժամկետում Կատարողից պահանջել բոլոր որակավորման չափանիշներին համապատասխանության փաստաթղթերը: Ուստի Ձեր պահանջը համարում ենք ժամանակավրեպ ...:

Այնուհանդերձ, «Ասատրյանս» ՍՊԸ-ն 25.01.2018թ. ՀՊՄՀ հիմնադրամին է ներկայացրել նաև 2017թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական առաջադրանքի իրականացման թիմի կազմը՝ նշելով մասնագետների որակավորումները:

Սակայն անհասկանալի պատճառներով անտեսելով վերոնշված գրությամբ ներկայացված հաշվետվությունների աուդիտորական առաջադրանքի իրականացման թիմի կազմը, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանը 26.01.2018թ. թիվ 3308 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, որին ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.01.2018թ. թիվ 03/24-2/1348-18 գրությամբ պատասխանել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա տեղեկատվության համաձայն «Ասատրյանս» ՍՊԸ-ում աշխատաում են թվով հինգ որակավորված հաշվապահներ ասոցիացիայի ACCA կողմից տրված որակավորման վկայականի կրող: ACCA վկայակնի կրողն է հանդիսանում Արամայիս Կարապետյանը՝ աուդիտորի որակավորման վկայական թիվ 494, տրված 01.03.2016թ.-ին, նույնականացման քարտ՝ 003077302:

Նման պայմաններում Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարան հիմնադրամը իր ամբողջությամբ չի ուսումնասիրել իր մոտ առկա փաստաթղթերը, չի գնահատել ՀՀ ֆինանսների նախարարության 29.01.2018թ. թիվ 03/24-2/1348-18 գրությամբ մատնանշված «ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա տեղեկատվության համաձայն» արտահայտությունը և որ իրավաչափորեն հանգել է այն եզրակացության, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ում աշխատող որակավորված աուդիտորներից միայն մեկն է հանդիսանում Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի /ACCA/ կողմից տրված որակավորման վկայականի կրող: Վերոհիշյալ եզրահանգումն էլ ոչ իրավաչափ դրվել է ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծածկագրով պայմանագիրը Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարան հիմնադրամի կողմից միակողմանի լուծելու հիմքում:»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին «Ասատրյանս» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/15 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 07.02.2018թ. թիվ 03/26-3/2071-18 գրությունը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 05.02.2018թ. թիվ 22/08.1.6-120 գրությունը, «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 15.11.2017թ. կնքված N ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը, Պատվիրատուի՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ին ուղղված 15.01.2018թ. թիվ 22/08.1.6.15 գրությունը, «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 17.01.2018թ. Պատվիրատուին ուղղված գրությունը, Պատվիրատուի՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ին ուղղված 31.01.2018թ. թիվ 22/08.1.6.-114 ծանուցումը, «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 19.02.2018թ. և 30.03.2018թ. Խորհրդին ուղղված գրությունները. Պատվիրատուի կողմից «Ասատրյանս» ՍՊԸ-ի 19.02.2018թ. գրությանն ի պատասխան 02.03.2018թ. թիվ 22/08.1.238 գրությունը, «Ասատրյանս» ՍՊԸ-ի և Ալբերտ Ասատրյանի միջև 06.11.2013թ. NL-13/7, «Ասատրյանս» ՍՊԸ-ի և Լուսինե Ամիրխանյանի միջև 26.05.2014թ. NL-14/06 «Ասատրյանս» ՍՊԸ-ի և Արամայիս Կարապետյանի միջև 26.04.2017թ. NL-17/012, «Ասատրյանս» ՍՊԸ-ի և Արաքսյա Ադամյանի միջև 20.09.2017թ. NL-17/001, «Ասատրյանս» ՍՊԸ-ի և Քնար Պետրոսյանի միջև 09.10.2017թ. NL-17/018 կնքված աշխատանքային պայմանագրերը.

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 15.11.2017թ. կնքված N ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է աուդիտորական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:
- 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե՝

ա) մատուցման ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

• 7.3 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողկմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայամանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է մինչև 15.02.2018թ. մատուցել տարեկան ֆինանսական հաշվետվության աուդիտի ծառայություններ: Ըստ նույն Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված՝ ձեռքբերվող ծառայության նկարագրի՝ աուդիտի պետք է իրականացվեր CIA, ACCA միջազգային որակավորում ունեցող առնվազն չորս աշխատակիցների միջոցով:

Պատվիրատուն 15.01.2018թ. թիվ 22/08.1.6.15 «Ասատրյանս» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կողմից ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5 ծածկագրով գնանշման հարցման հրավերը և 15.11.2017թ. կնքված N ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 աուդիտորական ծառայությունների

մատուցման գնման պայմանագիրը հիշեցնում ենք, որ տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերջնաժամկետ է նախատեսված մինչև 15.02.2018թ.:

Համաձայն N ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ ձեռքբերվող ծառայությունների տեխնիկական բնութագրի, պայման է սահմանված, որ ֆինանսական հաշվետվությունների աուդիտը պետք է իրականացվի միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն՝ CIA, ACCA միջազգային որակավորում ունեցող առնվազն չորս աշխատակիցների միջոցով:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ խնդրում ենք երկօրյա ժամկետում ներկայացնել Ձեր այն չորս մասնակցետների տվյալները (աշխատանքային պայմանագրերի կրկնօրինակները և համապատասխան որակավորումները հիմնավորող փաստաթղթերը), որոնց միջոցով իրականացվելու է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտը:

Հաշվի առնելով ժամկետների սեղմ լինելը՝ Ձեր համապատասխան որակավորում ունեցող մասնագետներին հրավիրում եք 17.01.2018թ. ժամը 11:00-ին համալսարանի պրոռեկտոր Ա. Թամազյանի աշխատասենյակ՝ հետագա աշխատանքների պլանավորման և իրագործման հարցերի քննարկման նպատակով»:

«Ասատրյանս» ՍՊԸ-ն 17.01.2018թ. գրությամբ Պատվիրատուին հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 15.01.2018թ. թիվ 22/08.1.6.15 գրության հայտնում ենք, որ համաձայն «Ասատրյանս» ՍՊԸ-ի (Կատարող) և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (Պատվիրատու) միջև 15.11.2017թ. կնքված N ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 (AM-AS-17-04) պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր), Կատարողը իր աշխատանքները սկսել է 12.12.2017թ. և շարունակում է մինչ օրս: «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակաությունը կհանձնի ժամանակին, ինչպես նշված է պայմանագրում՝ 15.02.2018թ.: Ի հավելումն նշենք, որ պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջների համապատասխանությունը ստուգելու համար Պատվիրատուն պարտավոր է անգործության ժամկետում Կատարողից պահանջել բոլոր որակավորման չափանիշների համապատասխանության փաստաթղթերը: Ուստի Ձեր պահանջը համարում ենք

ժամանակավրեպ: Մենք պարտավորվածություն չունենք լրացուցիչ Ձեզ ներկայացնելու նույն փաստաթղթերը: Նշենք նաև, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի աուդիտորները և թիմը իրենց աշխատանքները պլանավորում են ինքնուրույն՝ քննարկելով դրանք «Ասատրյանս» ՍՊԸ-ի ավագ աուդիտորների, առաջադրանքի ղեկավարի և տնօրեն-բաժնետիրոջ հետ: Մենք կարիք չունենք և նպատակային չենք գտնում մեր աշխատանքների պլանավորումը կատարելու Ձեր աշխատակիցների հետ, Ձեր աշխատակիցների ուղղորդմամբ: Մեր աշխատակիցները ունեն բավարար փորձ, գիտելիքներ և տեխնիկական հմտություններ, որակավորումներ, իրենց աշխատանքները պատշաճ որակով կատարելու համար: «Ասատրյանս» ՍՊԸ-ն լիցենզավորված աուդիտորական ընկերություն է, որն իրականացնում է անկախ աուդիտորական ծառայություններ, ինչպես նաև մի շարք այլ ծառայություններ, որոնց դուք կարող եք ծանոթանալ մեր կայքից: Մենք չենք հանդիսանում Ձեր աշխատակիցները, ցավոք պետք է նշեմ, որ չենք կարողանա ընդունել հրավերը: Հանդիպման համար, համաձայն մեր միջև պայմանագրի, մենք Ձեզ նախօրոք կտեղեկացնենք: Ցանկանում ենք նշել, որ աուդիտի շրջանակներում, Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն (ԱՄԱ) և հաշվապահների միջազգային ֆեդերացիայի կողմից հրապարակված պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնակարգի համաձայն, մենք պետք է դիմենք նախորդ աուդիտորին (Ջեներալ Ստանդարտ Քընսալթինգ ՍՊԸ), որպեսզի նա պատասխանի՝ արդյո՞ք ունեն որևէ մասնագիտական հիմնավորում, որի պատճառով «Ասատրյանս» ՍՊԸ-ն չպետք է հանձն առնի այս աշխատանքը, արդյո՞ք նախորդ աուդիտի աշխատանքների ժամանակ հաճախորդը փորձել է սահմանափակել կամ խոչընդոտել աուդիտորական աշխատանքները, արդյո՞ք Պատվիրատուի ղեկավարությունը ընդունում է այն գաղափարը, որ առաջին հերթին նա է պատասխանատու ֆինանասական հաշվետվություններում արտացոլված տեղեկության համար, ինչպես նաև խնդրել ենք մեզ տրամադրել Ջեներալ Սատանդարտ Քընսալթինգ ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուի 2016թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի աշխատանքային փաստաթղթերը, որպեսզի մենք կարողանանք գնահատել Պատվիրատուի սկզբնական մնացորդները և հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ պատկերացում կազմել: Մեզ հանձնարարվել է իրականացնել Պատվիրատուի 2018թ. համախմբված ֆինանսական

հաշվետվությունների աուդիտը: Այս պահի դրությամբ մենք չունենք և մեզ չեն տրամադրվել Պատվիրատուի սկզբնական մնացորդների վերաբերյալ պատկերացում և հիմնվորումներ կատարված ճշգրտումների գծով բացատրություններ կամ պարզաբանումներ: Պատվիրատուն ունի դուստր Ընկերություն, որը աուդիտի չի ենթարկվել: Այս պահի դրությամբ մենք չունենք և մեզ չեն տրամադրվել Պատվիրատուի սկզբնական մնացորդների վերաբերյալ պատկերացում և հիմնվորումներ կատարված ճշգրտումների գծով բացատրություններ կամ պարզաբանումներ: 06.12.2017թ. Պատվիրատուին ենք ուղարկել պահանջվող փաստաթղթերի և տեղեկատվության ցանկ, որն անհրաժեշտ է մեր աուդիտորական աշխատանքները կատարելու համար: Ինչպես նաև, ցանկանում ենք հանդիպել Պատվիրատուի ռեկտոր պարոն Ռուբեն Միրզախանյանի հետ: Առ այսօր մեզ հնարավորություն չի ընձեռնվել հանդիպելու Պատվիրատուի ռեկտոր պարոն Ռուբեն Միրզախանյանի հետ, պատճառաբանելով, որ ծանրագույն հիվանդ է: Սույն նամակով, ցանկանում ենք վերահաստատել, որ մենք դեռևս ցանկանում ենք հանդիպել Պատվիրատուի ռեկտոր պարոն Ռուբեն Միրզախանյանի հետ, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա Պատվիրատուի հոգաբարձուների Խորհրդի անդամների և հոգաբարձուների Խորհրդի նախագահի հետ: Ինչպես նաև նշենք, որ 06.12.2017թ. մեր կողմից Պատվիրատուին ուղարկված պահանջվող փաստթղթերի և տեղեկատվության ցանկից մեզ չեն տրամադրվել ողջ տեղեկատվությունը և ողջ փաստաթղթերը»:

Պատվիրատուն 31.01.2018թ. թիվ 22/08.1.6.-114 «Ասատրյանս» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան հիմնադրամի 2017թ. ֆինանսական տարվա տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով 2017թ. հոկտեմբերի 20-ին էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգում հրապարակված գնանշման հարցման հրավերի հավելված 5-ում ներկայացված ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի նախագծի հավելված 1-ով (Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) ձեռք բերվող ծառայությունների նկարագրով նախատեսված է եղել պահանջ՝ Պատվիրատուի 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ) հրապարակման

ենթակա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացում միջազգային CIA, ACCA միջազգային որակավորում ունեցող առնվազն 4 աշխատակիցների միջոցով: Ձեր ղեկավարած Ընկերությունը ներկայացրել է նշված գնանշման հարցմանը մասնակցության հայտ՝ վերջինիս կից ներկայացնելով նաև հրավերով պահանջվող հայտարարություն որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին (հավելված 3): Սահմանված ընթացակարգի համաձայն՝ Ձեր ղեկավարած Ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար, և հիմք ընդունելով ներկայացված գնային առաջարկը, գնահատող հանձնաժողովի կողմից կայացվել է որոշում՝ աուդիտի ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Ասատրյանս» ՍՊԸ-ին, որն էլ Համալսարանի և Ընկերության միջև կնքվել է 2017թ. նոյեմբերի 15-ին: ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի: Իսկ նույն կարգի 64-րդ կետի 3-րդ ենթակետը սահմանում է, որ եթե գնման առարկայի նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա նույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին:

Ելնելով վերոգրյալից, թե հայտերի գնահատման փուլում, և թե ընթացակարգով սահմանված անգործության ժամկետի ընթացքում «Ասատրյանս» ՍՊԸ-ից չի պահանջվել ներկայացնելու գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը: Սակայն, արդեն պայմանագրի գործողության ժամանակահատվածում Պատվիրատուի մոտ անհրաժեշտություն է ծագել հավաստիանալու գնանշման հարցման հրավերով

սահմանված որակավորման պահանջներին Ընկերության կողմից ներկայացված հայտարարության արժանահավատությանը: Գրությամբ դիմել ենք Ընկերությանը, սակայն Ընկերությունը 2018թ. հունվարի 17-ի պատասխան գրությամբ որակավորումները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մեր խնդրանքը մերժել է, այն համարելով ժամանակավրեպ, նշելով միաժամանակ, որ նշված փաստաթղթերի ներկայացման պահանջ Պատվիրատուն պարտավոր էր ներկայացնել Կատարողին անգործության ժամկետում, ինչը չի բխում գնումների ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներից: Չնայած այն հանգամանքին, որ հետագայում, 25.01.2018թ. Ընկերությունն էլեկտրոնային եղանակով կից գրությամբ ներկայացրել է աշխատակիցների որակավորման հավաստագրերի պատճենները, Համալսարանը 26.01.2018թ. թիվ 3308 գրությամբ պաշտոնական հարցում է կատարել նաև ՀՀ ֆինանսների նախարարությանը և 29.01.2018թ. թիվ 03/24-2/1348-18 գրությամբ ստացել է պատասխան առ այն, որ ըստ նախարարությունում առկա տեղեկատվության, «Ասատրյանս» ՍՊԸ-ում աշխատում են թվով հինգ որակավորված աուդիտորներ, որոնցից միայն մեկն է հանդիսանում Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի ACCA կողմից տրված որակավորման վկայականի կրող:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 8-րդ ենթակետի, ինչպես նաև Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարան հիմնադրամի և «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 2017թ. նոյեմբերի 15-ին ստորագրված ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծառայությունների մատուցման գնման պայմանագրի 7.3 կետի պահանջներով, պաշտոնապես ծանուցում ենք 15.11.2017թ. ստորագրված ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին»:

Պատվիրատուն «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 19.02.2018թ. Խորհրդին ուղղված գրության վերաբերյալ 02.03.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից «Ասատրյանս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Կատարող) 15.01.2018թ. գրավոր դիմում է ներկայացվել՝ խնդրելով ներկայացնել գնանշման հարցման հրավերի հավելված 5-ում և պայմանագրի հավելված 1-ում (ձեռքբերվող ծառայությունների

տեխնիկկան բնութագիր-գնման ժամանակացույց) նշված ACCA միջազգային որակավորում ունեցող աուդիտորների տվյալները, հրավիրելով վերջինիս կողմից նրկայացվող աուդիտորների թիմին Պատվիրատուի ներկայացուցիչների հետ հանդիպման: Նշված գրությանը կատարողը ներկայացրել է պատասխան գրություն, որում շեշտել է այն հանգամանքը, որ Կատարողը իր աշխատանքները սկսել է 12.12.2017թ., միաժամանակ նշել է, որ Պատվիրատուն, հրավերի պահանջներին Մասնակցի համապատասխանությունը ստուգելու համար, պարտավոր էր Կատարողից պահանջել որակավորման չափանիշներին համապատասխանության փաստաթղթերը անգործության ժամկետում, ինչի հիմքով Պատվիրատուի պահանջը մերժել է, համարելով այն ժամանակավրեպ: Այնուհանդերձ, նշված պատասխանից ուղիղ մեկ շաբաթ անց՝ 25.02.2018թ. Կատարողը պաշտոնական գրությամբ ներկայացրել է աուդիտորական առաջադրանքի իրականացման թիմի կազմը, պայմանագիրը գործողության մեջ դրվելուց ավելի քան երկու ամիս անց:

Վերը բերված հանգամանքների և դիրքորոշման մեջ ներկայացված փաստերի առնչությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը.

1. Կատարողն իրականում փորձ է արել սկսել աուդիտի իրականացման աշատանքները ոչ թե դեկտեմբերի 12-ից, այլ թերևս հունվարի 15-ից հետո, Պատվիրատուի գրությունը ստանալուց հետո, այսինքն պայմանագրով ծառայությունների մատուցման համար նախատեսված եռամսակից երկու ամիս անց, ինչի մասին են վկայում վերջինիս կողմից ներկայացված ներքոնշյալ փաստաթղթերը և գրությունները.

2. Կատարողի կողմից ներկայացված գրությունից պարզ է դառնում նաև, որ վերջինս լավատեղյակ չէ նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» պահանջներին: Այսպես, նշված կարգի 32-րդ կետի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին: Միաժամանակ, կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմավում է, որ հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք

աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի: Նշված բացառությունները սահմանված են արդեն կարգի 61-րդ, 62-րդ, 63-րդ և 64-րդ կետերով, որոնցից, մասնավորապես 64-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսվում է, որ եթե գնման առարկայի նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա նույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին: Միաժամանակ, 66-րդ կետը նախատեսում է, որ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Չնայած նրան, որ հետագայում, արդեն 25.01.2018թ. գրությամբ, Կատարողը ներկայացրել է համապատասխան փաստաթղթերը, այնուամենայնիվ Պատվիրատուն որոշել է հարցում կատարել լիազոր մարմնին, այն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն: Պատվիրատուի կողմից 26.01.2018թ. կատարված հարցմանն ի պատասխան ՀՀ Ֆինանսների նախարարությունը 29.01.2018թ. թիվ 03/24-2/1348-18 գրությամբ պատասխանել է, որ ըստ նախարարությունում առկա տեղեկատվության, «Ասատրյանս» ՍՊԸ-ում աշխատում են թվով հինգ որակավորված աուդիտորներ, որոնցից միայն մեկն է հանդիսանում Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի ACCA կողմից տրված որակավորման վկայականի կրող: Հիմք ընդունելով տրված պատասխանը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 8-րդ ենթակետի, ինչպես նաև Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 15.11.2017թ. կնքված ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծառայությունների մատուցման գնման պայմանագրի 7.3 կետի պահանջներով, Պատվիրատուն որոշում է կայացրել 15.11.2017թ. կնքված ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը միակողմանի լուծել:

3. Կատարողը, դիրքորոշման փաստարկման մասի 1-ին կետում նշելով իր կողմից 25.01.2018թ. գրությամբ ներկայացված աուդիտորական առաջադրանքի իրականացման

թիմի կազմի մասին, մեջբերում է կատարում Պատվիրատուի 31.01.2018թ. թիվ 22/08.1.6-114 գրությունից, խեղաթյուրելով գրության տեքստը: Մասնավորապես, գրության մեջ բացակայում է «որով հավաստել է, որ աշխատակիցները հանդիսանում են Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի կողմից տրված որակավորման վկայականի կրող» նախադասությունը:

Ներկայացված փաստաթղթերի արժանահավատությանը հավաստիանալու դեպքում Պատվիրատուն ուղղակի գրավոր պաշտոնական հարցմամբ չէր դիմի լիազոր մարմնին, ավելին, Կատարողի կողմից իր հավաստմամբ ACCA միջազգային որակավորում ունեցող աուդիտորների բերված ցանկում ներառված անձանց վերաբերյալ կատարողը ոչ մեր խնդրանքով, և ոչ էլ պաշտոնական ընթացակարգի փուլում, բացի վերջիններիս վկայագրերի պատճեններից, այդպես էլ չի ներկայացրել համապատասխան հիմնավորումներ: Ընդ որում բերված վկայագրերի պատճեններից պարզ է դառնում, որ ACCA լիիրավ անդամի կարգավիճակ ունեն երեք աուդիտներ: Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի ACCA պաշտոնական կայքի ընձեռնած որոնման համակարգի միջոցով մեր կողմից ձեռք բերված տեղեկատվությամբ, համաձայն որի Կատարողի կողմից բերված ցանկում ներառված երեք աուդիտորների՝ Ալբերտ Ասատրյանի, Արամայիս Կարապետյանի և Միհրան Մանուկյանի, վերաբերյալ տվյալների որոնումը որևէ արդյունք չի տվել, իսկ դիրքորոշման մեջ կցված վերջիններիս վկայագրերի պատճենները ոչ այլինչ են, քան նրանց ուսումնառության մասին վկայող տեղեկանքներ, որոնք նույնիսկ որևէ պաշտոնական ստորագրությամբ կամ կնիքով վավերացված չեն և չեն կարող հանդիսանալ որպես նրանց միջազգային որակավորումը վկայող փաստաթուղթ:

Ելնելով վերը նշված հանգամանքներից և առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին 6-րդ կետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի հիմքերով գտնում ենք, որ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կողմից «Ասատրյանս» ՍՊԸ-ի հետ 15.11.2017թ. կնքված ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/5-1 պայմանագրի միակողմանի լուծումը իրավաչափ է և հիմնավոր»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Խորհրդի անդամին հայտնեց, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռ. Միրզախանյանի կողմից ստացել է գրություն, որով վերջինս պահանջել է երկօրյա ժամկետում ներկայացնել Ընկերության չորս մասնագետների որակավորման տվյալների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, և համապատասխան որակավորում ունեցող մասնագետներին հրավիրել պրոռեկտոր Ա. Թամազյանի աշխատասենյակ՝ հետագա աշխատանքների պլանավորման և իրագործման հարցերի քննարկման նպատակով:

Ի պատասխան Պատվիրատուի գրության՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ն 17.01.2018թ. պատասխանել է, որ վերջինս աշխատանքները սկսել է 12.12.2017թ. և շարունակում մինչ օրս և նշել է, որ Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը կհանձնի ժամանակին, ինչպես նշված է պայմանագրում՝ 15.02.2018թ.: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն 25.01.2018թ. Պատվիրատուին է ներկայացրել 2017թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական առաջադրանքն իրականացնող թիմի կազմը՝ նշելով մասնագետների որակավորումները: Այնուհետև, 26.01.2018թ. Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանը հարցում է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարությանը, որին ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ում աշխատաում են թվով հինգ որակավորված հաշվապահների ասոցիացիայի (ACCA) կողմից տրված որակավորման վկայականի կրող մասնագետներ, որոնցից միայն մեկը՝ Արամայիս Կարապետյանն է հանդիսանում Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի (ACCA) կողմից տրված որակավորման վկայականի կրող:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Խորհրդի անդամը Ընկերությունից պահանջեց ներկայացնել համապատասխան որակավորված մասնագետների և «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև կնքված աշխատանքային պայմանագրերը, վերջիններիս՝ ACCA ատեստավորման վերաբերյալ ապացույցները:

«Ասատրյանս» ՍՊԸ-ն 07.05.2018թ. «ԷյՍիՍիԷյ»-ը ներկայացրել է հարցում, որով հայտնել է հետևյալը.

««Ասատրյանս» ՍՊԸ-ն կազմակերպություն է, ով իր հաճախորդներին տրամադրում է աուդիտի, հարկային և խորհրդատվական ծառայություններ: Մենք ունենք աշխատակիցներ, ովքեր «ԷյՍիՍիԷյ» ուսանողներ են և նրանցից որոշները՝ անդամներ:

«Ասատրյանս» ՍՊԸ-ի այն աշխատակիցները, որոնք «ԷյՍիՍիԷյ» ուսանողներ են և նրանցից ոմանք անդամներ են, հանդիսանում են՝ Ալբերտ Ասատրյանը, Արամայիս Կարապետյանը, Միհրան Մանուկյանը, Արաքս Ադամյանը, Լուսինե Ամիրխանյանը և Քնար Պետրոսյան: Մենք ցանկանում ենք ստուգել նրանց «ԷյՍիՍիԷյ»-ի ատեստավորման կարգավիճակները: Այն կօգտագործվի ներքին կարգով միայն «Ասատրյանս» ՍՊԸ-ի համար: Քանի որ մենք տեղյակ ենք, որ Արաքս Ադամյանը, Լուսինե Ամիրխանյանը և Քնար Պետրոսյանը հանդիսանում են «ԷյՍիՍիԷյ»-ի լիիրավ անդամներ և ունեն պրոֆեսիոնալ մակարդակի որակավորում, կարո՞ղ եք արդյոք հաստատել դրանք՝ նշելով վերոնշյալ անձանց որակավորումները»:

«Ասատրյանս» ՍՊԸ-ի 07.05.2018թ.կատարած հարցմանն ի պատասխան «ԷյՍիՍիԷյ»-ը հայտնել է հետևյալը.

«Քանի որ մեր բոլոր անդամները ընդգրկված են բոլորին հասանելի անդամների ցուցակում, ես իրավասու եմ հաստատել իրենց կարգավիճակները այս ասոցիացայում: Որպես այդպիսին, ես հաստատեմ եմ, որ.

Լուսինե Ամիրխանյանը հանդիսանում է «ԷյՍիՍիԷյ»-ի լիիրավ անդամ, այս կարգավիճակը տրվել է 2018թ.: Ներկայումս ունի կայուն վիճակ:

Քնար Պետրոսյանը հանդիսանում է «ԷյՍիՍիԷյ»-ի լիիրավ անդամ, այս կարգավիճակը տրվել է 2018թ.: Ներկայումս ունի կայուն վիճակ:

Արաքսյա Ադամյանը հանդիսանում է «ԷյՍիՍիԷյ»-ի լիիրավ անդամ, այս կարգավիճակը տրվել է 2018թ.: Ներկայումս ունի կայուն վիճակ»:

Միաժամանակ, «Ասատրյանս» ՍՊԸ-ն Խորհրդին տրամադրեց վերոնշյալ անձանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերը:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Խորհրդի անդամի կողմից Պատվիրատուի ներկայացուցչին ուղղված այն հարցին, թե արդյո՞ք ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուի հարցմանն ի պատասխան տրամադրված տեղեկատվության մեջ նշված մեկ Երդվյալ որակավորում

ունեցող աուդիտորը (Արամայիս Կարապետյանը) ընդգրկված է Ընկերության կողմից 07.05.2018թ. կատարված հարցմանն ի պատասխան «ԷյՍիՍիԷյ»-ի ներկայացված երեք աուդիտորների ցանկում, թե՝ ոչ, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ նշված աուդիտորը հիշյալ ցանկում ընդգրկված չէ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)

• 21-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝ (...) խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման

նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

• 64-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

3) եթե գնման առարկայի նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկան անշարժ գույք է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին:

• 66-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ.

- «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կողմից պայմանագիրը միակողմանի լուծվել է Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված՝ CIA, ACCA միջազգային որակավորում ունեցող

առնվազն չորս աշխատակցի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չներկայացնելու հիմնավորմամբ:

- «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են բավարար ապացույցներ առ այն, որ վերջինս ունի Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված՝ CIA, ACCA միջազգային որակավորում ունեցող առնվազն չորս աշխատակից:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից CIA, ACCA միջազգային որակավորում ունեցող առնվազն չորս աշխատակցի առկայության պահանջը չէր կարող ներկայացվել Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, քանի որ Հրավերի տեխնիկական բնութագրում Պատվիրատուն պետք է սահմաներ ձեռք բերվող ծառայության նկարագիրը, այլ ոչ թե մասնակցին ներկայացվող «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին վերաբերող տվյալներ:

Ինչ վերաբերում է Ընկերության «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին իր տվյալների համապատասխանության հիմնավորման համար ներկայացվող փաստաթղթերի արժանահավատության ստուգման նպատակով Պատվիրատուի կողմից պահանջված տեղեկատվությանը, ապա Խորհուրդը գտնում է, որ այն Պատվիրատուի կողմից պետք է պահանջվեր և համապատասխան փաստաթղթերով հիմնավորվեր նախքան պայմանագրի կնքումը՝ գնումների մասին ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.02.2017թ. « Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ